

30 JUL 2010

ԽՍՀՄ ՄԱՏՔՈՎՐՆԵՐՆԵՐ

# ԾԱԱԽՈՇԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՑԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ՀԱՍՈՒՆԱՆԱԼՅ,   
ԲԵՐՔԱՀԱՎԱՔՅ, ՏԱՄԿԱ-  
ՑՈՒՄՆ ՈՒ ԶՈՐԱՑՆԵԼՅ

## ԾԻԱԽՈՏԱԳՈՐԾԻ ԹԵՐԹԻԿ № 8.

633  
8-60



1933

ԾԽԱԽՈՏԻ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ, ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ,  
ՏԱՄԿԱՑՈՒՄՆ ՈՒ ՉՈՐԱՑՈՒՄԸ.

Ծխախոտագործական մեր շրջանների սոց. տնտեսությունները բերքահավաքի համար մղվող պայքարում լայնորեն պիտի հաշվի առնեն անցյալ տարվա դասերը, յերբ ծխախոտի բերքի նշանակալից մասը դաշտերում կորստի մատնվեց՝ ագրոկանոնների հիմնական պահանջները թերակատարելու հետևանքով: Այս տարի կոլխոզների աշխատանքներում բեկում պիտի կատարվի. բերքահավաքի ամբողջ կամպանիան պիտի կազմակերպել այնպես, վոր դաշտում առանց քաղելու չմնա ծխախոտի և վոչ մի տերեւի: Դրա համար բերքահավաքի ամբողջ ժամանակաշրջանում պիտի ծավալել խակական բայլշեվիկյան տեմպեր, վորովհետեւ ծխախոտի մշակման գործում բերքահավաքը հանդիսանում է ամենապատասխանաւոր մոմենտը: Յուրաքանչյան կատարված բերքահավաքը և հետագա կանոնավոր վերամշակումը, վերջին հաշվով, կանխորոշում են ծխախոտի բերքի վորակական և քանակական յելանքի ստացումը:

ԾԽԱԽՈՏԻ ՏԵՐԵՎԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ.

Ինչպես բուսական յուրաքանչյուր որգանիզմ, ծխախոտի տերեւի նույնպես հասնում է իր ամենաբարձր զարգացման և հետո սկսում է մեռնել (չորանալ): Տերեւի չորանալու սկսելու մոմենտը կոչվում է նրա «բուսանիքական հասունություն», վորից անհրաժեշտ է գանազանել տերեւի «տեխնիկական հասունությունը», վորն առաջնից տեղի յե ունենում մի քիչ շուտ: Տեխնիկական հասունության շրջանումն ել պիտի քաղել տերեւիները: Տեխնիկական հասունությունը զուգագիպում է ծխախոտի տերեւի ամենամեծ զարգացման և նրա ներքին հատկություններին:

Այդ վորոշվում է հետեւյալ նշաններով. տերեւինե-

633.

60

ԿՐ

ը ծածկվում են կպղուն փառով. նրանց տերեւիների գույնն ավելի գունատ են. յերեվում ե դեղնություն (կուտակվում ե կրախմալ), վորն սկսում է տերեւի կոթունից ու յեզրերից և տարածվում է ամբողջ տերեւի վրա կամ հավասարապես (թույլ տերեւիների մոտ) կամ առանձին գծերով (խիտ հյուծվածքներով տերեւիների մոտ):

Տերեւ ծռվում է դեպի ցած, տերեւիները դառնում են փիրուն, իսկ նրա կոթունը բնորոշ ճրճրթոցով հեշտությամբ պոկվում ե ցողունից:

Տերեւիների լրիվ գեղնությունն արդեն գերահասության նշան է: Գերհասունացած ծխախոտի բերքը կորցնում է թե վորակը և թե քանակը. նա աալիս ե մի քիչ պակաս բերք. վշրվում է վերամշակման ժամանակ: Ծխելիս թունդ ե և, ընդհանրապես, մի քիչ վատ և ստացվում: Թերահաս ծխախոտը հավաքելիս ծխախոտագործը կորցնում է թե վորակապես և թե քանակապես: Այսպիսի ծխախոտը չի ունենում մաքուր, լավ գույն, ավելի թեթեվաքաշ ե, ծխելու արժանիքների տեսակետից՝ շատ ավելի վատ:

Դրա համար ել ծխախոտն իր բնական բուրո հատկությունները կարող ե ստանալ այն գեպքում միայն, յերբ նա կհավաքվի իր իսկական հասունության ժամանակ:

Ծխախոտը շիթիլ անելուց հետո, միջին հաշվով առաջին քաղերը համառում է 40—50 որվա ընթացքում:

Խոնավ, ցածրագիր և հարուստ հողերում հասունությունը գանգաղում է, իսկ թեթեւ, տաք հողերում ծխախոտը շուտ է հասունանում:

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ.

Նախ սկսում են հասունանալ ծխախոտի ցողունի ներքեվի տերեւիները և աստիճանաբար նաև վերինները, վորի հետեւանքով բերքահավաքը կատարվում վոչ թե միանգամբից, այլ մի քանի անգամ: Հայաստանում մշակվող ծխախոտը հավաքվում է 5—6 անգամ, կամ 5 քաղով: Ծխախոտի տերեւների հավաքումը կամ կոտրումը տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ ծխախոտը թառամած չե: Որպա շող ժամերին ծխախոտն իսկապես թառամած ե լինում, իսկ այդ վիճակում նա կպչուն ե և թելին անցնե-

լու շեմքում տաքանում, վորը դժվարացնում է թելին անցնելը և հետագայում լավ վորակ չի ունենում: Դրա համար ել որվա շոգ ժամերին՝ չպիտի քաղեր: Քաղելու ամենալավ ժամանակը՝ իրիկնադեմն ե, վորովհետեւ որվա ընթացքում ծխախոտի տերեների մեջ կուտակվում են զանազան նյութեր, վորոնք պայմանավորում են նրա լավ հատկությունը, իսկ գիշերվա ընթացքում այդ նյութերը ծախսվում են: Ծխախոտի տերեները հավաքում են առավոտյան և յերեկոյան և վոչ յերեք շոգ ժամերին: Տերեվները հավաքում են, յերբ ցող չկա, կամ յերբ նա վերացած ե, վորովհետեւ ցողով հավաքած ծխախոտն իր մեջ պարունակում ե մինչև 20 տոկոս ջուր: Իսկ այդպիսի ծըլիախոտը տամկելու և չորացնելու ժամանակ փշանում ե: Յեթե ծխախոտի հասունությունը զուգագիպում ե անձը վային ժամանակաշրջանի, ապա տերեները հագենում են խոնավությամբ և հասունությունը շարունակվել ե սկսում: Դրա հետևանքով բերքահավաքը ձգձգիրում ե: Այսպիսի գեաքերում անհրաժեշտ է ոգտվել անձրեների ժամանակոր քաղաքից և քաղել բոլոր հասունացած տերեվները: Ըստհանրապես, վաղահասության վրա ազգում են հողն ու յեղանակը: Աղքատ հողերում աճող բույսերի տերեվներն արելու յեղանակին արագ են հասունանում:

Յուրա և ամպամած որերին հասունությունը դանդաղում ե: Մի քաղից մյուսը տեղում է 5—10 որ, նայած տերեվների շարքին, ծխախոտի տեսակին, հողին և տրվածքի քանակին: Յածի տերեներն ավելի շուտ են հասունանում, վերիններն ընդհանրապես՝ ավելի դանդաղ:

ՔԱՂԵԼՈՒ ԶԵՎՀ.— Յուրաքանչյուր քաղող վերցնում է ծխախոտի յերկու շարք և նրանց միջով առաջ անցնելով յերկու ձեռքով հերթով մեկ մի շարքից, մեկ մյուս շարքից քաղում ե հասունացած տերեները: Քաղելիս թթամատով յուցամատով վերեվից բռնում են տերեւի կոթից և ծռելով այն ցած և մի կողմի վրա՝ կտրում ե: Այսպիսով, աջ և ձախ ձեռքով յուրաքանչյուր բռնույից կտրելով վորոշքանակությամբ տերեւ (վորը յուրաքանչյուր քաղի և տեսակի համար լինում ե առանձին), քաղողը նրանց հեղում դարսում է շարքերով և շարունակում ե քաղելը: Վերջացնելով իր

յերկու շարքը, քաղողը հավաքում է բոլոր տերեները և կանոնավոր կերպով կոթերը մի կողմի արած, շարքերից դուրս է բերգում և դնում ճանապարհի վրա, վորաեղից և ծխախոտի տերեները փոխադրում են չորանոց: Ծխախոտը տեղափոխում են սայլերով, փուրդոններով և այն, վորոնց վրա զամբյուղներով շարում են քաղած ծխախոտը:

Զամբյուղների մեջ ծխախոտը շարում են շրջանաձև, կոթերը գեպի զամբյուղների պատերը: Ծխախոտը տեղափոխում են նաև ուղղակի սայլերի վրա դարսելով, նախորոք սայլերի վրա փուելով բրեգենստ կամ ուղղոժա:

Վերելից նույնպես ծածկում են ուղղոժայով: Դեպի շրջանոցները տեղափոխությունը կատարվում է անմիջապես: Ծխախոտն իր հետագա մշակման վայրը բերվելով, զամբյուղից կամ սայլից զգուշությամբ դատարկում են և չորացնում հատակի վրա տերեների յերեսները գեպի վեր, փոքրիկ կույտեր կազմում:

### ԾԽԱԽՈՏԸ ԹԵԼԻՆ ՇԱՐԵԼԸ.

Չորանոց տեղափոխած ծխախոտը մետաղա հատուկ առեղների օգնությամբ (վորոնց յերկարությունը մոտ կես մետր ե, իսկ լայնությունը 1 սանտ.) թելին են անցնում: Ասեղը թելում են այնքան յերկար, վորքան ավյալ անտեսության ունեցած չորացնող շրջանակների կամ վագոնների յերկարությունն ե: Թելին շարելիս, տերեները կոթի մասում, վերջից մոտ քառորդ վերշոկ հեռավորության վրա յերեւ ծակվում և բոլոր տերեները շարգում են յերեսի կողմից այնպես, վոր յուրաքանչյուր հետևյալ տերեն իր յերեսի կողմով ընկնում է շարգած հետևյալ տերեվի վրա, և բոլոր տերեները յերեսի կողմից շարգում են մի ուղղությամբ:

Վորպեսզի ծխախոտի չորացումն անցնի կանոնավոր, տերեները թելին անցնում են վոչ շատ խիտ և վոչ շատ նսոր: Յեթե քաղը կատարված է անձրեվից հետո, ապա նսոր պիտի շարել, ըստ վորում ցածրի տերեները խիտ, իսկ վերինները՝ ընդհանրապես մի քիչ նոսր: Թելին անցնելիս անհրաժեշտ է ընտրել միատեսակ հասունության տերեներ, վորպեսզի հետագայում տամկացումը նորմալ ընթանա:

## ԾԽԱԽՈՇԻ ԶՈՐԱՑՆԵԼԸ.

Ծխախոսի քաղած ու թելին անցրած տերեւ, նախքան արդյունաբերական տեսք ընդունելը, համապատասխան մշակության պիտի յենթարկվի, ուր առաջին մոմենտը չուրացնելն է: Չորացնելու պրոցեսի բարդությունը կայանում է փոք միայն տերեներից խոնավությունը հեռացնելու մեջ: Քաղած տերեւ հանդիսանում է բույսի որգանը, վորի մեջ տեղի յեն ունենում մի շարք կենսական պրոցեսներ, մասնավորապես մի քանի բարդ նյութեր քայլայվելով՝ ավելի պարզերի յեն վերածվում, վորի հետեւվանքով տերեւի վորակը բարձրանում է: Արտաքին այս փոփոխություններն արտահայտվում են տերեւի գեղին գույն ստանալով:

Չորացման առաջին շրջանը—ծխախոտի տամկացումը, հանդիսանում է ծխախոտի տերեների գեղին գույն ստանալը և նրա ծխելու հատկությունների բարձրանալը: Այսպիսով, տամկացումը հանդիսանում է ծխախոտի չորացնելու պրոցեսի կարեվորագույն մասը: Նրանից ե կախված ծխախոտի հատկությունը, վորը նա կարող է ստանալ իր բնական հատկությունների շնորհիվ: Տամկացման ժամանակ անհրաժեշտ է ուշագիր լինել, վորպեսզի տերեւ չտփազանց արագ չկորցնի իր մեջ պարունակած խոնավությունը, վորովհետև այդ գեպքում տերեւ մենանում է և բարդ նյութերի քայլայման պրոցեսը լլովին չի կատարվում, վորի հետեւվանքով տերեւ չորանոցից գուրս և գալիս կանաչ ու ցածրագորակ: Տամկացման ժամանակ ավելորդ խոնավությունը նույնպես ծխախոտի վրա վատ և անդրադառնում, վորովհետև այդ գեպքում տերեւ հեշտությամբ փթում է: Մրանից հետեւվում է, վոր տամկացման ժամանակ մեծ ուշագրությամբ պետք է հետեւիլ տերեների խոնավության կորցնելուն: Անհրաժեշտ է տերեներից խոնավությունը հեռացնել աստիճանաբար, մինչույն ժամանակ չթույլ տալով, վոր նրա մեջ ավելորդ խոնավություն մնա:

Տամկացման պրոցեսը վերջանում է ծխախոտի տերեւի գեղնագույն գառնալով, վորից հետո ստացված գեղին գույնը վերջնականապես պիտի ապահովել տերեւի միջից հեռացնելով մնացած ամբողջ խոնավությունը, բայց արդեն սեփական չորանալու պրոցեսում:

Տամկացման ամենատարածված յեղանակները հետեւյալներն են՝

**ՏԱՄԿԱՑՈՒՄ ԹԵԼԻ ՎՐԱ. — ԹԵԼԻ անցրած տերեները դարսվում են կրկնակի և չորանոցի հատակին իրար վրա շարպում վերջավորություններով դեպի ցած, իսկ կոթով դեպի վեր: Չորանոցի հատակին նախորոք ծղոտից ցամքար և փափում: Գերադասելի յեւ հացահատիկի ծղոտ: Այս ձեռով ծըխախոտն յենթարկվում է տամկացման: Ժամանակ առ ժամանակ, յերբ ծխախոտը սկսում է տաքանալ, շարանները պիտի հովացնել, նրանց մյուս կողմի վրա շուռ տալով: Այսպիսի յեղանակով տամկացնելու դեպքում, անհրաժեշտ է ծխախոտին առանձին ուշագրությամբ հետեւել, թույլ չտալով, վոր նա այրվի:**

**ՅԵԹԵ ծխախոտը բաց-վարդագույն է դառնում Ռեմյուրի 30-ը և ավելի չերմաստիճանում, ապա անհրաժեշտ է այն վերադարսել, վորից նա կհովանա: Լավ տաք յեղանակին, ծըխախոտը, նայած տերեների հատկության, տամկանում է 1—2 որում: Թույլ ծխախոտն ավելի շուռ է տամկանում, իսկ թանձն ավելի քիչ, հյութալին յերկար ժամանակ և պահանջում:**

**ՏԱՄԿԱՑՈՒՄ ԾՐՉԱՆԾԿՆԵՐՈՒՄ. — Այս գեպքում թելին անցրած ծխախոտը կախում են շրջանակների վրա և ապա տաքանալու համար 1—2 ժամ արևին և արգում: Դըրանից հետո ծխախոտը շարաններով ներս և տարգում, վորտեղ ծխախոտները միմիյանց ավելի յեն մոտեցվում է այս ձեռով թողնում են այնքան ժամանակ, մինչև վոր ծխախոտը կստանա ցանկալի գեղին գույնը:**

Տամկացում պիտի կատարվի չոր և լավ հողմնահարված շենքում: Ծխախոտի տամկացման հետեւանքով ստացված դեպին գույնն անհրաժեշտ է ապահովել հետաքա չորացումով, վորի ժամանակ տերեներից պիտի հեռացնել խոնավության մնացորդները: Այդ նպատակով ծխախոտը շրջանակով արեվին են տալիս և այս գեպքում պատասխանատու մոմենտը հանդիսանում է տամկացումից չորացմանն անցնելը, վորը գոչ մի գեպքում չի կատարվում մի անգամից, այլ աստիճանաբար: Լավ գույն ստանալու համար չորացնելիս սկզբում ծխախոտն արևին պիտի տալ մի քանի ժամով միայն, խու-

սափելով որվա ամենաաաք ժամերից, իսկ հետո ծխախոտի արևի տակ թողնելու ժամերը յերկարացվում են: Չորացնելու վերջին, յերբ տերեները սկսում են արդեն չորանար այդպիսի նախազգուշացումներն ավելորդ են դառնում, և ծխախոտը արևի տակ մնում է ամբողջ որը: Քամի և անձեռվոտ որերին ծխախոտը վհչ մի գեաքում բաց ողում թողնել չի կարելի: Յերբ չորանում է տերեւ, նրանից հետո գլխավոր յերակը՝ կոթի հետ միասին, ապա չորացումը վերջացած կարելի յե համարել: Ծխախոտը չորանում է որերի զանազան թվերում, վորը կախված է արևոտ որերից, ծխախոտի տեսակից, քաղելու այս կամ այն ձեռվից, տերեների թանձրությունից, նրանց հասունությունից, շարվածքի նոսրությունից և այլն:

Վերեկի տերեները ներքեկի տերեներից ավելի դանդաղ են չորանում: Լավ չորացած ծխախոտը ճանաչվում է միջին յերակից, նրա ամենահաստ տեղից, շարող ասեղի ծակի մոտերքում: Յեթե նա ավելի կամ պակաս չափով չոր ե, և մտաերի ուժեղ հպումից խոնավության հետքեր չեն նկատվում, ապա ուրեմն ծխախոտը չոր ե: Կանոնավոր չորացած ծխախոտը շրջանակներից կամ վագոններից վերցվում է: Վերցրած յուրաքանչյուր շարանների ազատված ծայրերը միացվում են և 3—կամ 5 այդպիսի կիսով ծալած շարանները վերջին ծայրից միմյանց կապելով ստացվում է մի կապոց, վորը կոչվում է հավանգ: Հավանգները կախվում են ծխախոտի նույն շենքի առաստաղից, կամ թե մի այլ, այդ նպատակին հարմար շենքի առաստաղից:

Չորացնելու ժամանակաշրջանում հողամասերին ամբացրած բրիգադներից պիտի առանձնացնել հատուկ ողակներ, վորոնք պատասխանատու լինեն քաղելու, թելին անցնելու շարանները շրջանակներից կախելու, տամկացման և չորացման պլոցեններին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0282419